ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Անուն, ազգանուն՝

Հեթում Համամճյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ ֆինանսների նախարարության բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության բյուջետային գործընթացի համակարգման և ուժային մարմինների ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

ք. Մոսկվա (Ռուսաստանի Դաշնություն) 2019 թվականի հուլիսի 7-9-ը:

4. Հրավիրող կողմը՝

Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերության քարտուղարություն:

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

ՀԱՊԿ ֆինանսատնտեսական գործունեությունը կանոնակարգող որոշ փաստաթղթերի նախագծերի քննարկման նպատակով ս.թ. հուլիսի 8-9-ը Ռուսաստանի Դաշնության ք. Մոսկվայում անցկացվող ՀԱՊԿ անդամ-պետությունների շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների փորձագետների խորհրդատվություններին մասնակցություն:

6. Քննարկված թեմաները՝

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության 2020 թվականի բյուջեի մասին», «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության 2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվության մասին», «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության մշտապես գործող աշխատանքային մարմինների աշխատակիցներին դրամական խրախուսման կարգի վերաբերյալ կանոնակարգի մասին» և «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության արտաբյուջետային միջոցների ձևավորման և օգտագործման կարգի մասին» ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի որոշումների նախագծեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀԱՊԿ քարտուղարությունում ՀԱՊԿ գլխավոր քարտուղարի պարտականությունները ժամանակավորապես կատարող Վ. Սեմերիկովի նախագահությամբ անցկացված

խորհրդատվությունների ժամանակ տեղի են ունեցել Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի և Տաջիկստանի Հանրապետությունների, Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև ՀԱՊԿ քարտուղարության և ՀԱՊԿ միացյալ շտաբի փորձագետների հետ հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են ՀԱՊԿ գործունեությունը կանոնակարգվող վերը նշված փաստաթղթերի նախագծերը, ինչպես նաև վերջինների վերաբերյալ ՀԱՊԿ անդամ-պետություններից ստացված առաջարկությունները և դիտողությունները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Փորձագետների խորհրդատվությունների արդյունքների մասին կազմվել է ՀԱՊԿ ֆինանսատնտեսական գործունեությունը կանոնակարգող հարցերով ս.թ. հուլիսի 8-9-ը Ռուսաստանի Դաշնության ք. Մոսկվայում ՀԱՊԿ անդամ-պետությունների շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների լիազոր ներկայացուցիչների խորհրդատվությունների համապատասխան արձանագրություն (կցվում է):

Խորհրդատվությունների արդյունքում փորձագետները հնարավոր համարեցին ՀԱՊԿ 2020 թվականի բյուջեի նախագծով հայտավորված ծախսերի ծավալի կրճատում շուրջ 61.0 մլն ՌԴ ռուբլու չափով (Նախագծով ներկայացված 483.4 մլն ՌԴ ռուբլու փոխարեն առաջարկվել է 422.4 մլն ՌԴ ռուբլի): Նշված գումարից շուրջ 51.5 մլն ՌԴ ռուբլին ՀԱՊԿ 2020 թվականի բյուջեի նախագծով նախատեսված էր Նյութական խրախուսման ֆոնդի համար (ֆոնդի նախատեսման հարցը խորհրդատվությունների օրակարգից հանելու հետ է կապված), 7.5 մլն ՌԴ ռուբլին պայմանավորված է ծախսերի հաշվարկների հիմքում գնաճը 3.8% նախատեսմամբ և տարադրամի փոխարժեքի (ռուբլի/դոլար) վերանայմամբ, 1.8 մլն ՌԴ ռուբլին AUDI մակնիշի ավտոմոբիլի մաքսազերծման համար նախատեսված գումարն է, իսկ 140.0 հազար ՌԴ ռուբլին՝ նյութական պաշարների գծով նախատեսվող գումարների գծով տնտեսման չափն է՝ կապված գնաճի ինդեքսի վերանայմամբ: Միաժամանակ, փորձագետները հնարավոր համարեցին կրճատել գործուղումների գծով ծախսերը պայմանավորված՝ գնաճի և տարադրամի փոխարժեքի վերանայմամբ:

Խորհրդատվությունների մասնակիցների կողմից ՀԱՊԿ Քարտուղարությանը և Միացյալ շտաբին առաջարկվել է ՀԱՊԿ 2020 թվականի բյուջեի նախագիծը լրամշակել և «Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության 2020 թվականի բյուջեի

մասին» ՀԱՊԿ ՀԱԽ որոշման նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ՀԱՊԿ կանոնադիր մարմինների քննարկմանը:

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության 2018 թվականի բյուջեի կատարման հաշվետվության մասին» ՀԱԽ որոշման նախագիծը համարվել է համաձայնեցված և առաջարկվել այն ուղարկել ՀԱՊԿ կանոնադիր մարմինների համաձայնեցմանը՝ հաշվի առնելով Տաջիկական Կողմի վերապահումը:

Հաշվի առնելով ՀԱՊԿ անդամ-պետությունների դիտողություններն ու առաջարկությունները «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության մշտապես գործող աշխատանքային մարմինների աշխատակիցներին դրամական խրախուսման կարգի վերաբերյալ կանոնակարգի մասին» ՀԱԽ որոշման նախագծի վերաբերյալ՝ այն հանվել է խորհրդատվությունների օրակարգից:

«Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպության արտաբյուջետային միջոցների ձևավորման և օգտագործման կարգի մասին» ՀԱՊԿ ՀԱԽ որոշման նախագծի առնչությամբ մասնակիցները հնարավոր գտան քննարկումներին անդրադառնալ՝ նախագծի վերաբերյալ Ղազախստանի Հանրապետության կողմից դիրքորոշման ներկայացման պարագայում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները, եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Հանդիպման ընթացքում կատարված առաջարկությունները և դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները ներառված են արձանագրության մեջ:

10. **Գործուղվողը՝** Հեթում Համամճյան:

11. **Ստորագրությունը, ամսաթիվը՝** **12.07.2019թ.**